ԱՆՈՒՇ ԼԱԼԱՅԱՆ

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՈՒՄՆ ԱՆՀԱՏԻ ԴՐԱՄԱՅՈՒՄ

Ստեղծագործող անհատը, լինի նա գրող, քանդակագործ, երաժիշտ թե նկարիչ, որ գործ ունի արարման հետ, միշտ վեր է կանգնած հասարակությունից: Չնայած ընդունված է այն կարծիքը, թե երաժշտությունն է իր հոգեպարար ելեւէջներով առավել ներազդում մարդու ինչպես գիտակցության, այնպես եւ ենթագիտակցական խորախորհուրդ գաղտնարանների վրա, այնուամենայնիվ, գրողի կառուցած խոսքն ապրեցնելուց բացի՝ նաեւ գաղափարներ է բովանդակում, գործողություններ թելադրում: Նույն երաժշտությունն ամբողջանում է բանաստեղծության միջոցով: Եւ եթե ընդունենք, որ Արարիչը խոսքի միջոցով ոչնչից ստեղծեց աշխարհը, ապա խոսքի արժեքն ու գնահատականը այս համապատկերում ավելի կվսեմանա: Աղասի Այվազյանը հաճախ է աստվածաշնչյան իմաստնությունն օգտագործում իր երկերում՝ երբեմն խորհելու, մյուս դեպքում՝ խրատելու, դաստիարակելու համար: Հոգեւոր կյանքի հետ հարաբերակցության անխուսափելիության մասին են՝«Խոսքի երկարությունը», «Խաչդուռ», «Մեղքով հղացածը», «Մարիամ Մագթաղինացի», «Ցուցակ», «Սինյոր Մարտիրոսի արկածները» եւ այլ գործեր:

Գեղարվեստական խոսքը՝ արձակ թե չափածո՝ ազդելու, մտածելու, ապրեցնելու, դաստիարակելու համար է: Իրականությունը գրողի ենթակայական (սուբյեկտիվ) ընդհանրացումներով արտացոլանքն է գտնում խոսքի միջոցով, որը հաճախ դառնում է ճշմարտության որոնման ուղենիշ:

Ա. Այվազյանի «Խոսքի երկարությունը» պատմվածքում վագոնի խցիկում քառասուն տարեկան «ճմռված մի տղամարդ» տեղավորվում է նույն հասակի մի կնոջ մոտ, եւ «տոթախարշ», ճնշող մթնոլորտում «երիտասարդությունն ու ամոթն անցած տղամարդը» իր անձը հանձնում է նրան: Ընդհանրապես, Ա. Այվազյանն ազատ է մարդկային հարաբերությունների ուղղակի նկարագրության մեջ, որն առավել ակներեւ են դարձնում անհատի ներքին ապրումները: Միեւնույն ժամանակ պատմվածքներում չկան գռեհիկ, պարկեշտությունը ոտնահարող նկարագրություններ: Այսպես, մինչեւ լուսաբաց շարունակվում է նրա խոսքը. «Խոսում էր շնչառության արանքում, համբույրների ժամանակ... Խոսքը հորդում էր մարմնի բոլոր մասերից՝ թոքից ու սրտից, ջղերից ու մազա-

նոթներից»[1]: Ու ամենազարմանալին համբույրների տակ տղամարդու անընդհատ ու միալար խոսելն էր: Զգացողությունների, խորաթափանց ապրումների հաղորդման մեծ ներթափանցում կա Ա. Այվազյանի այս պատմվածքում:

Շատ հաճախ նրա պատմվածքները, վիպակներն ու էսսեները անսյուժե են՝ կառուցվածքային տարբեր առանձնահատկություններով օժտված: Այստեղ հեղինակի նշանակետը հերոսներին գործողության մեջ դնելը չէ, այլ ապրումի ու զգացողության արտահայտումը: Անկեղծ էր տղամարդու խոսքը, ամիսներ շարունակ սաղմնավորվել, եփվել էր «ծերունանմանի» սերը եւ այժմ նեղ հուն գտած գետակի պես հորձանք էր տալիս: Վագոնի խցիկի արտասովոր հանդիպումը նույնպիսի անսպասելի ավարտ է ունենում: Կնճիռներն ազատ արձակած կինը, ում թոշնած մաշկը կախվել էր երեսից, բաժանումից առաջ՝ «Զահլա տարար» երկու բառով ոչնչացնում է սիրո խոսքը: Եւ որովհետեւ խոսքը «շատ կարճ էր եւ ապօրինածին», տղամարդը չի կարողանում միանգամից ըմբռնել բառերի նշանակությունը: Կնոջ հեռանալն անտանելի զգացողություն է արթնացնում «ծերունանմանի» մեջ: Նրա խոսքը պարպվում է մի ակնթարթում: Այնինչ՝ ճամփորդախցիկի մեկ այլ անկյունում սուտ քուն մտած, խոսքի կարոտ հարեւանուհին սիրվել էր ուզում, բայց չէր սիրվում. գլուխը թաղած խոնավ բարձի մեջ՝ անշարժացել էր՝ չխանգարելու այդպիսի մեծ խոստովանության պահը: Այս պատմությունից հետո Ա. Այվազյանն ընդհանրացնում է. «Դժվար է որոշել խոսքի չափի նշանակությունը: Անհնար է չափակշռել խոսքի երկարությունը... Սպան ասաց՝ կրակ, եւ սառը գետնափորում մեռան Փիլիսոփայի երեսուն տարվա դասախոսությունները: Դա միայն չորս տառ էր լեզվի վրա դրված, որ արմատ չուներ ուղեղում եւ սրտում»[2]: Բառի նվազագույն միավորները՝ հնչյունները, ամբոխի «պոչատ» բոռոց-ձայնարկությունը, խաչ հանեցին Քրիստոսին: Ամենակարճ բառն անգամ ճակատագրեր կարող է որոշել: Ավելի լայն ընդհանրացում չէր էլ կարող լինել, քան՝ «Չորս հազար տարի Հայը խոսում է: Խոսքը երկար է: Պատասխանը՝ կարճ. «Զահլա՛ տարար»[3]: Երբեմն ժլատ խոսքն ավելին կարող է արժենալ, քան երկարաշունչ, ձանձրության սահմանը հատող երկարաբանությունը:

«Վեցերորդ մատը» պատմվածքում հեղինակն անդրադառնում է համամիասնությունը խախտող օրինաչափությանը: Առինքնող ու ցանկահարույց Շամիրամը վեց մատ ուներ, եւ այս ավելորդությունը «կտրուկ շրջում էր գեղեցկության ընկալման կենսաբանական համակարգը»[4]: Այս առեղծվածն ստիպում է հեղինակին գտնել վեցերորդ մատի ծագման պատճառը: Հոր եւ պապի գեներում նա չի գտնում իր հարցի պատասխանը: Պատմվածքի վերջում բացվում է խորախորհուրդ գաղտնիքը: Պարզվում է՝ Շամիրամի մեծ պապը

1 **Ա. Այվազյան**, Երկրի վրայի զբաղմունքը, Երեւան, 1993, էջ 3:
2 Անդ, էջ 6:
3 Անդ:
4 Անդ, էջ 17:

կտրել էր Գրգեի մեծ տատ Ալմատիկինի ոսկե մատանիով մատը: Դռնեդուռցու համար ոսկե մատանին ավելին արժեր, քան մարդկային մատը. «Նա վերցրել էր ոսկին, իսկ նրա մարմինը, նրա էությունը, նրա մոլեկուլներն ընդունակ էին տեսնելու մատը, ավելի բարձր, իրենց հասկանալիք մարդկային էության մասը: Ու նրանք հաղորդվել էին այդ մատի կողը ձեւավորող սաղմին: Եւ երկու սերունդ անց Ալմատիկինի մատը հայտնվել էր Շամիրամի ձեռքին»[5]: Ստեղծագործության ենթատեքստում առկա է հոգեւոր կատարելության հասնելու անհրաժեշտության մղումը: Վեց մատի խորհուրդը զուգորդվում է կատարած մեղքը փոխհատուցելու անխուսափելիության հետ. որտեղ առկա է մեղքը, այնտեղ խախտվում է ներդաշնակության օրինաչափությունը: Ստեղծագործությունը, ըստ էության, աստվածաշնչյան ճշմարտության որոնման աղերսներ ունի:

Մոգական իրապաշտության (ռեալիզմի) հեղինակ Գ. Մարկեսի ստեղծագործություններից մեկում եւս կա մարմնի ներդաշնակությունը խախտող ավելորդություն: Նրա հերոսներին էլ պոչ է աճում, երբ խախտում են բարոյականության նորմերը: Ուրսուլան եւ իր ամուսինը ազգականներ էին: Չնայած նրանց միությունը կանխորոշված էր ծննդյան օրվանից, սակայն երիտասարդների ամուսնության մասին տեղեկանալով՝ ծնողները դիմադրում են: Նրանք վախենում էին, որ խաչասերվող երկու տոհմերի առողջ շառավիղները կխայտառակվեն, եւ լույս աշխարհ կգան իգուաններ. «Ուրսուլայի հորաքույրը ամուսնացել էր Խոսե Արկադիո Բուենդիայի քեռու հետ եւ զավակ էր ծնել: Ամբողջ կյանքի ընթացքում նեղ շալվարի փոխարեն նա լայն շալվար էր հագնում եւ մեռավ քառասուներկու տարեկան հասակում՝ արյան կորստից... քանի որ ծնվել-մեծացել էր պոչով. կոճիկային կարթ էր՝ ծուպավոր ծայրով»[6]: Անլիարժեքության զգացումը վերաճում է մարմնական արատների:

Աղասի Այվազյանի արծարծած գրեթե բոլոր սյուժեները խնդիրների իրենց առանցքն ունեն, որտեղ եւ կյանքը, մարդիկ, աշխարհը ներկայանում են գրողական ընկալման յուրահատուկ գույներով, գծագրումներով, ժամանակի ու շարժման տեւողությամբ, փիլիսոփայական կաղապարախորքով:

Սիրո առարկայական ինքնատիպ դրսեւորում է նաեւ «Փառահամար» պատմվածքը, որի իրերը, երեւույթները չպետք է ուսումնասիրվեն միայն իրենց այդքան սովորական թվացող փորձնական գոյությամբ. յուրաքանչյուր երեւույթի համար ամրագրվում է նրա իմաստը, գաղափարը, առանց որին դիմելու, սակայն, պատմվածքն առնվազն անհեթեթություն կամ ցնորք կթվա: Օրինակ՝ Դ. Գասպարյանը գրում է. «Սա արդեն երեւակայությամբ ստեղծված կյանքի հատկանշական պահերից մեկն է, երբ իրական վախերը, սերը, կիսաճշմարտությունը ծածկված են ոգեւորության մշուշով, ներշնչանքի ու ոգեւորության մեջ կատարելագործվում եւ անշոշափելին դարձնում շոշափելի»[7]:

5 Անդ, էջ 20:
6 **Գ. Մարկես**, Հարյուր տարվա մենություն, Երեւան, 1979, էջ 26:
7 «Ժամանակակից հայ արձակը». հոդվածների ժողովածու, Երեւան, 1981, էջ 82:

Պատմվածքում հրատապ է սիրո եւ բարու՝ որպես ամենազորի եւ կատարյալի ընկալման ներդաշնակությունը ցանկացած երեւույթի եւ ընդհանրապես ողջ աշխարհի առանցքում (պատահական չէ, որ ձեռնածուն հենց բանտում սովորեց աճպարարություն անել): Հեղինակը գրում է, որ սերը կարող է շոշափելի եւ տեսանելի դարձնել ամեն ինչ: Սերն ու բարին ամենաստեղծ են, նրանք կարող են մարմին առնել. իսկական սերը, բարին հրաշալի են, մեծ ուժ ունեն, եւ մարմինները ծնվում են նրանցից: Ահա թե ինչու ձեռնածուն զգաց, որ իր սերը կարող է առարկա դառնալ, որն սկզբում արտահայտվեց նապաստակի, այնուհետեւ տարագույն ձիերի միջոցով: Հրաշքը սա է, որը մարդիկ չեն տեսնում, այլ ենթագիտակցաբար աճպարարություն են փնտրում:

Մարդու, մարդկայինի, գիտակցականի, ենթագիտակցականի, տրամաբանականի, գոյության խորհուրդի եւ հոգեւորի համապարփակ բանաձեւում է Աղասի Այվազյանի «Ալիբի» (էսսեներ, պատմվածքներ, կարճ հորինվածքներ) ժողովածուն: «Գրական գեղարվեստը, - գրում է Գեղարm-ը, - եւս բազում առեղծվածներ ու հմայության ակունքներ ունի: Աղասի Այվազյանն «Ալիբի» ժողովածուում մերթ որոշակի ու խորագնին, մերթ ուրվագծային ոճով ու հուշարարությամբ մատնացույց է անում այդ առեղծվածների ու ակունքների հասցեները, առանձնապես, եթե դրանք ճշգրտվում են կենսագոյի հավասարակշռության օրենքով»[8]:

Հեղինակը, ասես, մի ներքին բանավեճ է մղում ճշմարտության, առհասարակ ճշմարիտ գոյի առեղծվածը գտնելու եւ հաստատելու՝ ենթագիտակցության մեջ մրրկող, գիտակցությունից օտարվող ու ինքն իրեն օտարող «մեղադրյալ աշխարհում», ուր ճշմարտությունը չի ձեւվում, չի առարկայանում եւ դեռ չէսքիզված՝ արդեն ձուլվում է անվերջության հանգող ժամանակին՝ թողնելով լոկ երջանկության ընդհանրական մղձավանջ: Այստեղ ցանկացած պահ, կացություն, պատկեր, հոգեկան երեւույթ անձնագոյաբանական շրջանակ է Ա. Այվազյանի համար: Ահա թե ինչու առարկայականության (օբյեկտիվության) հողին վերջինս միշտ հանգում է ենթակայականի (սուբյեկտիվի) բացահայտման նկատառումներից՝ խիստ կարեւորելով հեղինակային կենսափորձն ու ինքնավերլուծումը: Ոչ միայն «Ալիբին», այլեւ Ա. Այվազյանի ստեղծագործությունների գերակշիռ մասն ապահովված է տրամաբանական խորքի, հոգեբանական վերլուծության, հետաքրքրության աստիճանավորման երաշխիքով: Ուստի հավաստի եւ իրական է, որ ժողովածուն, իրոք, կարող է «ալիբի» դառնալ հայրենիքից օտարված, նրա նկատմամբ հավատը կորցրած, առեղծված ժամանակներում մոլորված, հոգեւոր ու մտավոր ոլորտներում: Նա առարկայական աշխարհը կրում է իր մեջ, բայց չի շարժվում աշխարհի նախանշված, սակայն իր է-ին անհարիր հունով: Նա իր ճիշտն ուներ... Ուստի համարձակություն ունեցավ «ալիբի» չլինելու համար ընդդիմանալ նաեւ Գո-

8 «Գեղարm», Ստեփանակերտ, թ. 1, 2002, էջ 4:

յարարին: Այստեղ ի հայտ է գալիս ներքին ես-ը կաղապարող հիմնախնդրի երկրորդ կողմը. համարձակությունն ու համառ սկզբունքները չեն շրջանակում վերջինիս թերարժեքության զգացումը, եւ ինքն իրեն համարում է նսեմ. «Ճգնեցի հասկանալ՝ ո՞րն է պիղծն ու մաքուրը, խառնավարն ու բանականը, ի՞նչն է առաքինին ու պակասավորը այդ անորոշ թանձրուկի մեջ, եւ բառերը, որ իմ ուղեղում միայն հայերեն էին եւ ռուսերեն, եւ իմաստները, որ գոնե շրջագծել էի ինչ-որ զգացմունքներով, դուրս եկան իրենց սահմանագծից, ցնդեցին...»[9]. կրկին երկարժեքության զգացում, որը կաշկանդում է ներքին, բնական մղումները: Հեղինակին թվում էր՝ «ալիբի» չդառնալու միտքը մերժելով՝ թեթեւացած դուրս կգա դատախազությունից, այնինչ՝ այդ թեթեւությունը մակերեսային ու խաբուսիկ ազատություն էր. «Դատախազությունից դուրս եկա թեթեւացած, բայց այդ թեթեւությունը մակերեսային ազատություն էր»[10]: Իսկ մյուս կողմից՝ նիրվանային հոգեվիճակները ձգում են վերջինիս. «Ինձ համար կարեւոր է՝ տեսե՞լ եմ նրան թե չէ, - գրում է հեղինակը, - ...երկմտանքի այդ անիվը, որ պտտվեց իմ մեջ, իր չարխերի արանքն առնելով հինը ու նորը, տեսածս ու երեւակայածս, գիտակցությունս ու ենթագիտակցությունս՝ ինձ մտցրեց աղտամուղտի մեջ»[11]:

Գիտակցությունն ու ենթագիտակցությունը հակառակ բեւեռներ ձգվելով՝ մի ներքին կռիվ են մղում: Գիտակցությունը հեղինակն է, ենթագիտակցությունը՝ իմ ես-ի մեջ բոլորը: Այս խնդրահարույց կացությունն էլ կերպարին մղում է հոգեբանական ինքնապաշտպանության, եւ նա ներում է հայցում իր «վատ հիշողության» համար: «Ես նրան չեմ տեսել»[12], - վերջապես արտաբերում է նա: Ի վերջո, կատարելությունը հաղթում է՝ ինչպես այվազյանական բոլոր կերպարներում: Սա աշխարհն ու մարդկանց ճշմարիտ տեսնելու այվազյանական «դրդապատճառն» է, որտեղ ռոմանտիկայի նշույլներ ընդհանրապես չկան: Հեղինակը չի համակերպվում կեղծիքին, ստորին, որն աշխարհի հետ չհաշտվելու հոգեբանական կաղապարներ է թելադրում: Նրա կերպարները բարձրագույն ապրումներով օժտված անհատներ են. բարձրագույն ապրումները հատուկ են կատարելության հասած մարդկանց, որոնք գիտեն մերձենալ տիեզերքին եւ Արարչին, ապրել բոլորի ես-ով: Ահա թե ինչու Ա. Այվազյանը կարողանում է միաժամանակ մերձենալ թե՛ տիեզերքին, թե՛ Աստծուն եւ թե՛ ամենացածր դասի ներկայացուցիչներին:

Ա. Այվազյանի ստեղծագործությունների առանցքում անհատի հոգեբանական ներքին դրաման է՝ ճշմարտության որոնման խնդրի շեշտադրմամբ, որը լուծվում է ինքնահաղթահարմամբ:

9 **Ա. Այվազյան**, Ալիբի, Երեւան, 2000, էջ 34:
10 Անդ:
11 Անդ:
12 Անդ:

РЕЗЮМЕ

Ключевые слова *- координаты мировозрения, монада, значимость слова, приврошение, астральное и ментальное поле, победа человека.*

Образы Айвазяна справедливость находят в личном понятии действительности. Каков внутренний мир человека, каково его восприятие действительности, таково и его отношение к миру. Справедливость Айвазяна основана на библейских заветах, которая в одном случае, заключается в там, чтобы думать, а в другом-воспитывать. В драме личности поиск справедливости разрешается в победе над собой.

SUMMARY

Key words: *the coordinates of world conception, the victory of the truth, monada, the measurement of the length of speech, mysterious enthusiasm, empathy, astral and mental fields, faith, human victory.*

Ayvazian's characters reveal the truth by individually perceiving the reality. What the inner world, emotions, perceptions and the depth of penetration of a human are, so is his behavior towards the world.

The truth, according to Ayvazian, is based on biblical commandments which is called in one case to think, to ponder and in another case to bring up. On the basis of the individual's drama is the problem of the searching for the truth which resolves by self-overcoming.